


քոս ժԲ¹: Ըստ երեւոյթին Տիգրանի միջամտու-
թիւնն ալ օգուտ մը չէր կրցած ունենալ, շարու-
նակական պատերազմներով քայքայած ու
վատթարացած այս դժբախտ երկրին մէջ բաղ-
ձացուած խաղաղութիւնը վերահաստատելու:
Անտիոքոս Եւսերոս Պարթեւաց դէմ մղած
պատերազմի մը մէջ կը մեռնի: Ասոր մահուան
վրայ Փիլիպպոս եւ Գեմետրիոս անոր հողերուն
կը տիրանան ու զանոնք իրարու մէջ կը բաժնեն:
Ի վերջոյ սակայն երեքը եւս իրարու հետ զարնուե-
լով, Գեմետրիոս գերի կ'իյնայ ու կը սպաննուի:
Հիմայ ալ Անտիոքոս ժԲ. Փիլիպպոսի գահին
թեկնածելով՝ երբ կը պատրաստուէր անոր վրայ
քալել, Արեւոս՝ տաճիկ իշխանին դէմ մղած
մէկ ճակատին մէջ կը զարնուի, եւ իւր թագա-
ւորութեան երկիրը, խոր Ասորիք, անկէ կը դրա-
ւուի²:

Այսպէս ուրեմն Տիգրանի գերիշխանու-
թիւնն անգամ, որ ամբողջ Ասորիքի վրայ՝ մինչեւ
եգիպտական սահմանները կը տարածուէր³,
չկրցաւ այս խռովայոյզ երկրին խաղաղ ու
անդորր կեանք մը պարգեւել: Ասորիքը Հայաս-
տանի կցելէ ետք, Տիգրան իր իշխանութեան
սահմանները տարածեց մինչեւ արեւելեան Աիլի-
կիա, եւ անպա, դաշտային Աիլիկիոյ վրայ եւս,
որով Հայաստան անմիջական կերպով սահմա-
նակիցն եղաւ Հռոմայեցւոց, որոնք արդէն 102 է
(ն. ք. ք.) ի վեր գրաւած էին քարուտ Աիլիկիան⁴:

(Շարունակելի) 3. Գ. ԳԱՐԱՆՓՆԵԱՆ



ԿԱՄՍԱՐԵԱԿԱՆՔ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՏԱԿ

(Շարունակելի):

Ք. Սպանդարատ:

Արշակ կրցաւ կարճ ժամանակով յազուրդ
տալ իր ցանկութեան, որովհետեւ տիրացաւ
Շիրակի եւ Արշարունեաց: Բայց կամարական
տոհմը անժառանգ բնաջինջ ընել չյաջողեցաւ:
Կոտորածէն ազատած էր Սպանդարատ, երկրորդ
կամարականը, որուն գոյութիւնն աներկբայ է
եւ որ կ'ապրի Գ. տարու երկրորդ կէսին: Ազա-
տութեան պարագաներուն եւ Սպանդարատի
գործունէութեան նկատմամբ մեր երկու միակ
աղբիւրներն իրարմէ կը հեռանան:

Բուզանդ Գ, ժԹ, շատ բնական ու ար-
ժանահաւատ, եւ նման արկածներու մէջ յաճա-
խադէպ ելք մը մատնանիչ կ'ընէ. « Բայց յազգէն
յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդա-
րատ, թաքուցեալ ապրեցուցանէր սպարապետն
զօրավարն Հայոց Ասսակ, որ յետոյ լինէր ժա-
ռանգ աշխարհին »: Բոլորովին այլազգ է խոր.
Գ, լա. « Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց
Սպանդարատ, որդի Արշաւրի, քանզի ունէր կին
Արշակունի, որ եւ բնակեցաւ ի նորին ժառան-
գութեան ի կողմանս Տարօնոյ եւ Հաշտենից,
իբր տրտունջ զՏօրեղբօրէն իւրմէ եղեալ զՆեր-
սեհէ, որոյ աղագաւ եւ ոչ ի կատարման նոցա
ղիպեցաւ »: Այս տարբերութիւնը շատ զարմա-
նալի է երկու մատենագիրներու մէջ, որոնցմէ
մին միւսին իբր միակ աղբիւր ծառայած է դա-
րուն պատմութեան համար: Խեղաթիւրոզն է
Խորենացի եւ զայն ըրած է զիտուճնաւոր կեր-
պով. « Պատմութիւնը այլայլել է Խորենացին՝
չկամենալով նորա ազատարարի՝ Ասսակ Մամի-
կոնեանի անունը յիշել: Բայց զարմանալի է, որ
Խորենացին Ասսակի ազնիւ դերը լուութեան տա-
լով, այնու ամենայնիւ յիշում է, որ Սպանդա-
րատը կոտորածից ազատեցաւ Տարօնում (Մամի-
կոնեանների երկրում) » Դաղբաշեան, անդ, 111:
Բայց այս գաւառով մատնուող հետքն ալ տկա-
րացնելու համար կ'աւելցնէ « եւ Հաշտենից »:
Եւ շատ բնական է Խորենացւոյ քով Սպանդա-
րատի չափահասութիւնը, եթէ առանց Ասսակի
օգնութեան պիտի ազատէր:

Խորենացւոյ համեմատ Սպանդարատ որդի
էր Արշաւրի: Բայց հաստատուն պահելով անոր
մանկիկ մի փոքրիկ ըլլալը, անհաւանական կը

¹ Ասիական այս յարաբերութիւնները տես Schürer
անդ, էջ 135 եւ 136, ինչպէս նաեւ Wilckenի Antiochosի
վրայ գրած յօդուածը (տես Pauly-Wissowaի), որ սակայն
շատ կետերու մէջ Schürerէ կը տարբերի:
² Այս ժամանակաշրջանի մասին աւելի մանրամասն
կը խօսի Յովսէփոս, Antiquit. XIII, 13, 4-16, 4: Նոյնպէս
Եւսերոս, Chron. I, 259-262. Յուստինոս, գիրք 38-40
եւ Ապպիանոս, Syr., գլ. 48 եւ 69:
³ Appian, Syr., c. 48-49.
⁴ Mommsen, Röm. Gesch. II, 133.

որդի Արշալուի՝ Պերողամատի գիծը կը շարունակէ եւ իր որդիներով՝ Գազաւոն ու Շաւարշ՝ մինչեւ Ե դար կը հասցնէ տոհմագիծը (Խոր. Գ. 1ա)։ Սպանդարատի մահուան մասին Խորենացի եւս կը լռէ, մինչ անոր կարծեցեալ որդւոց նկատմամբ ազատօրէն կը ճարտարամտէ։

Հետեւինք Խորենացոյ պատմութեան։

Պապի Տրաւէրով իրենց հողերու վրայ վերահաստատուելէ յետոյ, երբ հայ թագաւորութիւնը կը կիսուի եւ Արշակ Լքելով պարսկական բաժինը կը քաշուի յունական Հայաստան (Խոր. Գ. 1ա), Գազաւոն եւս կը հետեւի Արշակայ։ Նա կը մնայ հաւատարիմ վերջնոյ նաեւ այն ժամանակ, երբ Պարսկական Հայաստանն ալ կը ստանայ իւր թագաւորը յանձին Խոսրովի։ Թէեւ սա կ'աշխատի հեռացած նախարարներն իրեն ձգել, բայց Տրաւէրին չեն պատասխաներ անոնք, որոնց մէջ էր նաեւ Գազաւոն (Խգ), «վասն որոյ զժառանգութիւնս նոցա կալաւ Խոսրով յարքունիս Տրամնաւ Շապհոյ (!) եւ ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր եւ զեղբօր յեղբայր»։ Այսպէս՝ երկրորդ անգամ կը զրկուին կամսարականք իրենց կալուածներէն։ Արշակի եւ Խոսրովու միջեւ ծագած պատերազմին մէջ, երբ Արշակ մահուան վտանգի մէջ կը ձօձայ Սահակ Ապետէն հալածական՝ «ահագին նահատակութիւնս ցուցեալ Գազաւոնի, որդւոյ Սպանդարատայ, բազում անգամ դարձեալ յարձակմամբ՝ ցրուէր զհետամուտն, եւ տայր պարապ ժամ գնալոյ Արշակայ»։ Արշակ թէեւ կը զերծանի սրոյ հարուածէն, բայց «հիւանդացեալ մալրայական ակտիւք՝ ջերանի հիւծմամբ եւ մեռանի... Եւ այնուհետեւ ոչ եւս կացուցին Յոյք ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջնորդէր նախարարաց կողմանցն այնոցիկ քաջն Գազաւոն, եւ յաշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյք կովէսս իշխանս» (Խոր. Գ. 1ա)։ Գազաւոն կ'ըլլայ ուրեմն առաջին կովէսը, որով սկիզբ կ'ըլլայ Զ—Է դարու կամսարականաց 'պատրիկ, 'հիւպատ, տիտղոսներուն (Ալիշան, Շիրակ, 3—4)։

Գաղբաշեան չի վարանիր այս ամէնը «մի ազատ յաւելուած Խորենացու կողմից» հռչակելու (Գաղբաշեան, անդ, 111)։ Իրապէս շատ անմեկնելի պիտի մնար բացարձակ լուութիւնը Բուզանդի (Ե, ա), Փարպեցոյ (Ա, ը), որոնք Խորենացոյ բառացի գործածած աղբիւրներն են։ Գիտումնաւոր յաւելուած կը համարի նաեւ խալաթեանց։ Խորենացի, որուն համեմատ կամսարականք երկրորդ էին յետ արքայի, կամ աւելի

ճիշդ, այդպէս կը բաղձար հաւատացնել, կ'ուզէր մեկնել թէ ինչու 426 ին անոնք ԺԳ. գահը կը բռնեն։ Գա պատիժն էր Գազաւոնի անհաւատարմութեան։ Անոր յունական ծառայութիւնը, կովէսութիւնը շարժառիթ եղած են իր ամբողջ տոհմին աստիճանական անկումին։ Ահա այս դիտաւորութիւնը ներշնչած է Խորենացոյ Գ. 1ա, 1ա զլուիններն ու նաեւ յաջորդ պատմուածքը, որ նոյնպէս բոլորովին անծանօթ է Ղազարի։

Յունական բաժնին նախարարներն յուսախար կը դիմեն նամակով (Խոր. Գ. 1ա) Խոսրովու, առաջնորդ ունենալով 'Ստրատելատ Գազաւոն, եւ կը խնդրեն անյիշաչարութիւն, կալուածներու վերադարձում, ազատութիւն կայսեր իշխանութենէն, «զի մի վրդովեցցեն զընկուցութիւնս մեր, որք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի» ու փոխարէն՝ կը խոստանան հաւատարիմ ծառայութիւն։ Խոսրով նպաստաւոր պատասխան մը կը գրէ, եւ մեծ բարեկամութիւն ցոյց կու տայ Գազաւոնի, զոր «արիւն իմ եւ հարազատութիւն» կը կոչէ, եւ «Արշակունի անուամբ» կը պատուէ։ Գազաւոն «ընդ հուպ դարձուցանէ զընաւ նախարարսն առ արքայն Խոսրով», որ կը յաջողի (Խթ.) նաեւ Արկադիոս (!) շահիլ եւ յունական բաժինն ալ իր թագաւորութեան կցել։ Շապուհ (!) ծայր աստիճան դժգոհած յունահայկական այս մերձեցումէն, գահընկէց կ'ընէ զԽոսրով (391)։ Զայս կը հաստատէ նաեւ Փարպեցի, Ա. Թ, սակայն Խոր. աւելին կը հաղորդէ։ Ըստ Խորենացոյ Խոսրով կը գերուի եւ կը դատապարտուի բանտարկութեան Անուշ բերդի։ «ընդ նմա տարաւ եւ Գազաւոն կապանօք, կասկածեալ յառնն քաջութենէ, եւ զտուն նորա հրամայէ ունել յարքունիս, նոյնպէս եւ զեղբօր նորա Շաւարշայ»։ Շաւարշ եւս կը պատժուի, որովհետեւ Պարգեւ Ամատունոյ հետ 700 հոգւոյ գլուխ անցած՝ փորձած էր «զերծուցանել զարքայն իւրեանց Խոսրով եւ ոչ յաջողեցան ի պարաւանդելոյ ոտից նորա ի շլթայս։ Եւ հզօր մարտի եղելոյ՝ սպանան Շաւարշ...»։ Գլ. ծե, կ'իմանանք, որ Գազաւոնի հետ էր նաեւ որդին Հրահատ։ Գազաւոն կը մեռնի բանտին մէջ, իսկ Հրահատ «յետ հօրն նորա մահուան հանեալ յԱնյիշելի ամրոցէն՝ անդր եւս քան զՍագաստան էր գումարեալ», եւ անուշտ նա ալ հոն կը գտնէ իր վախճանը։ Խոր. մոռցած է այդ մասին խօսելու։ Բացարձակօրէն ձրի ենթադրութեամբ Ալիշան զՀրահատ հայր Արշալուի քաջի

(451) կը հռչակէ (Շիր. 4): Աշխարհի ուշադրութենէն վերայած է, որ խոր. Գ. կէ, կու տայ նաեւ Հրահատայ որդւոյն անունը: Երբ Սահակ 426ին կաթողիկոսութեան խնդրով Գուռը կը ներկայանայ, ի մէջ այլոց կը խնդրէ «զի դարձուցէ զտուն ազգականին իմոյ եւ քոյ (Սուրենեանն Պահլաւի), զմանկանն Գազաւոնի զորդւոյն Հրահատայ»: Ուրեմն Հրահատ ունէր որդի՝ Գազաւոն (Հմմտ. նաեւ Just, Iran. Namonbuch, էջ 425): Եւ այն առթիւ՝ իբր կողմնակից Սահակայ կաթողիկոսանալուն՝ կը յիշէ խոր. Սպանդարատ Արշարունին:

Բոլորը՝ անուններ ու դէպքեր, որոնք ի սպառ անյիշատակ մնացած են ժամանակի պատմագրին՝ Փարպեցւոյ քով, որ իբր մտերիմ կամ սարականաց՝ չէր կրնար անգիտանալ կամ լռել:

Արշակունեաց շրջանէն միայն Արշաւիր կամսարական (իբր 330—360 գործող) եւ Սպանդարատ (Գ. դարու երկրորդ կէսին) աներկբայ կերպով պատմական են: Իսկ ինչ որ ընկեր ենացին կը պատմէ, անվերաբանելի է եւ գիտունները կերտուածքի բնոյթ ունի: Եւ որովհետեւ այդ գիտաւորութիւնը եղած է կամսարական գահին կեղծ ելեւէջը մեկնել, եւ մենք Բուզանդի, Փարպեցւոյ եւ Գահնամակի մէջ անոնց գահը էպպէս նոյն եւ անփոփոխ գտանք, ասով իրաւունք կը ստանանք այդ գիտաւորութեամբ ստեղծուած խորենացւոյ ամբողջ պատմութեան վրայ տարակուսելու: Ամէն բան առանց բացառութեան իբր հարազատ ընդունիլ՝ հանփազանց վստահութիւն պիտի նշանակէր հանդէպ պատմահօր անկեղծութեան եւ ճշմարտասիրութեան: Ան նուազն խոհեմ ու զգոյշ կասկածով վերաբերուելու ենք, եթէ մերժելի ճայրայեղութիւն կը թուի Գաղբաշեանի եւ խալիֆանցի հետ ամենայն ինչ սուտ եւ մտաջածին հռչակելու արմատական ճամբան:

Հ. Ս. ԿՈՊԵՆԱՆ



ՀՈՒՆՆԻՆԻ ԵՒ ՀՈՍՆԻՆԻ

Ժ.Զ — Ժ.Թ. ԳՐԵԲԵՐՈՒՄ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական այն առեւտրական գաղութների շարքում, որոնք Միջին Դարից սկսած զանազան ժամանակ հաստատուել են եւրոպական այլեւայլ կենտրոններում, կարելոր տեղ է զբաղում Ամստերդամի, Հոլանդայի այս նշանաւոր քաղաքի հայ գաղութը: Այստեղ է, որ հայ տպագրութիւնն եթէ ոչ իր ծագումը, զէթ իր անդրանիկ փայլուն շրջանն է ունեցած, արտադրելով այնպիսի գործեր, որոնք դեռ այսօր եւս տպագրական արուեստի զարդն են կազմում: Բեռլինաւոր է եղած նաեւ նրա առեւտրական գործունէութիւնը: Անժամօթ չէ այս. քիչ չեն այս առթիւ գրուածները թէ հայ եւ թէ օտար լեզուներով: Բայց դրանք բոլորը դրուած են զանազան հրատարակութիւնների մէջ եւ պատահական ընտրութիւն են կրում: Բացի դրանից բնաւորութիւն են կրում: Բացի դրանից բնաւորութիւն են մնացած եւ կամ ինչպէս հարկն է չեն ըննուած: Այս պակասը լրացնելու մտքով ձեռնարկեցինք գրել Ամստերդամի անցեալ գաղութի գործունէութեան ամբողջական պատմութիւնը, ջանալով ամփոփել ըստ կարելոյն բոլոր արդէն ծանօթ իրողութիւններն եւ լրացնելով ու մասամբ ուղղելով նաեւ դրանք՝ նոր, հոլանդական աղբիւրների հիման վրայ: Եւ որովհետեւ Հոլանդայի ուրիշ մասերում եւս պահպանում են հետաքրքրական հայ յիշատակներ, ուստի աւելի նպատակայարժատակներ, ուստի աւելի նպատակայարժատակներ այնպէս ընդարձակել մար համարեցինք այնպէս ընդարձակել պատմութեանս սահմաններն, որ նա ընդգրկէ թէ՛ այդ յիշատակներն եւ թէ՛ առհասարակ Հոլանդայի եւ Հայոց յարաբերութիւնները Ժ.Զ—Ժ.Թ դարերում:

Ամստերդամ, 10 Դեկտեմբեր 1924: